

Հարցաշար
Հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի

11-րդ դասարան

Տևողությունը 150 րոպե

Շահույթ չունեցող մի խնամքով կար: Փոքրիկ տղան սիրում էր խաղալ նրա շուրջը, քնել նրա ստվերի ներքո: Ծառն ու տղան երջանիկ էին:

Մի օր տղան սրտնեղած ասաց, որ իրեն փող է պետք՝ խաղալիքներ գնելու համար: Ծառը սիրով նրան տվեց իր խնամքները. թող վաճառի դրանք և խաղալիքներ գնի: Հավաքելով պտուղները՝ տղան ուրախ հեռացավ և երկար ժամանակ չվերադարձավ:

«Մի թե մոռացել է ինձ», – մտածում է օրեցօր տխրող ծառը:

Եվ մի օր եկավ տղան՝ արդեն հասուն տղամարդ դարձած, և ասաց.

– Ես տուն չունեմ. կարո՞ղ ես օգնել:

Ծառն առաջարկեց կտրել իր ճյուղերը: Վայրկյան իսկ չհասպաղելով՝ մարդը հատեց խնամքներու բոլոր ընձյուղները:

«Գիտեմ՝ շատ է զբաղված, այդ պատճառով չի այցելում ինձ», – տարիներ շարունակ ինքն իրեն համոզում էր ծառը:

Ամառային մի օր, սակայն, տղամարդը կանգնեց ծառի դիմաց. այս անգամ էլ նրան նավ էր հարկավոր:

– Կտրի՛ր բունս, կառուցի՛ր նավակդ – հորդորեց ծառը:

Մարդն անվրդով հատեց ծառի բունը և գոհ, երջանիկ մեկնեց նավարկության:

... Խնամքներին դարձյալ տխուր էր ու մենակ:

Տարիներ անց էբբ մարդը վերադարձավ, խնամքներին մեղավոր ձայնով սկսեց արդարանալ.

– Դու գիտես, տղա ս, որ չորացող արմատներից բացի այլևս ոչինչ չունեմ:

– Ինձ ավելին պետք էլ չէ: Ես հոգնած եմ. հանգստանալ եմ ուզում:

Մարդն ամուր գրկեց ծառի խորշոմապատ արմատներն ու քնեց:

Իսկ ծառը լալիս էր...

1. Մեկնաբանի՛ր առակի այլաբանությունը 2-3 նախադասությամբ՝ շարունակելով անավարտ միտքը: (3 միավոր)
2. Բնութագրի՛ր առակի հերոսներին՝ մեկական բարդ նախադասությամբ: (2 միավոր)
3. Տեքստից դուրս գրի՛ր պակասավոր բայերի չորս տարբեր օրինակներ, նշի՛ր բայական 5 հատկանիշները: (2 միավոր)
4. Որոշի՛ր տեքստում ընդգծված բառերի շարահյուսական պաշտոնները: (1 միավոր)
5. Տեքստից դուրս գրի՛ր կապերի ու կապական բառերի 5 օրինակ: (1 միավոր)
6. Տրված եռյակներից ընտրի՛ր մեկական բաղադրիչ և կազմի՛ր բարդ ածանցավոր բառեր. լուսամուտ-արևազօծ-երկշաքք, աչագեղ-հնօրյա-թխադեմ, կերպարանք-տիկին-մեծադիր, մեղմորեն-անակնկալ-սևաթարթիչ: (2 միավոր)
7. Գրի՛ր *սինյորո, ընդվզել, ամուլ, հեղհեղուկ, խանդակաթ* բառերի հոմանիշներն ու հականիշները կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)
8. Բացատրի՛ր *վերջին մոհիկան և առաջին ծիծեռնակ* դարձվածքները: (1 միավոր)
9. Մեկնաբանի՛ր մեկ բարդ նախադասությամբ. «Մեծ է նա, ով հասկանում է ուրիշի մեծությունը»: (1 միավոր)
10. Գրի՛ր շարադրություն «Դարերի աննկուն ճամփորդը» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)